



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ.

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՋԱՐՄԱՅԻ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԻՆԱՆ

Բ. ՏԱՐԻ

— ՇԱԲԱԹ, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911 —

ԹԻԻ 50

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յիսուս իբրեւ մեծ ուսուցիչ

ՀԻՆ ՕՐԵՐ, ՆՈՐ ՕՐԵՐ.—Յուշեր Դպրեվանդի կեսնքէն

Երկու խօսք ալ Ամերիկահայ թեմի խնդիրներու վրայ

Հողային հարցի վերջին փուլը

ԼԵՋՈՒԱԿԱՆ ՀԱՐՑ ՄԸ.—Տառադարձութեան մասին

Կանոնագիր Հայ Եկեղեց. Երաժշտ. Յանձնաժողովոյ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ.—Շաբթուան կարեւոր լուրեր.—Ատաղ-

ուած գիրքեր

ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

ՍԱՀԱԿ Ծ. Վ. ՕՏԱՊԱՇԵԱՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՊՍԱԿ Ծ. Վ. ԽՈՐԷՆԵԱՆ

ԽԱԶԻՍԱՐ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
դիմել առ Զարմայր Քահանայ Կեօղիւրեան, Կ. Պոլիս, Պեփկթաշ, Հայոց Եկեղեցի

بشيكطاش ارمنى كليسا سنده «داجار» غزتمى مى مديرى پاپاس زارماير افدى

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
«ՏԱՃԱՐ» Ի ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԻՆ

Տաճար իր երկրորդ չրջանին վերջին ամիսը թեւակոխելու առթիւ, լի վստահութեամբ իր ձեռնարկած գործին օգտակարութեան և տեւականութեան վրայ, կը բանայ այժմէն իր երրորդ շրջանի բաժանորդագրութիւնը:

Այս առթիւ կը ժողովանք յայտնել թէ ժողովուրդին մէջ Գրիստոնէական կրօնքի և Հայ Եկեղեցիի սէրը արժարժեղու ազնիւ նպատակին աւելի ուժգնութեամբ ու եռանդով ծառայել պիտի աշխատի Տաճար յառաջիկայ երրորդ չրջանին, որու միջոցին որոշ ուղղութեամբ մը պիտի ունենայ միշտ:

Ա. Հոգեւոր կեանքի բաժինը:

Բ. Հայ վկայաբանութեան բաժինը:

Գ. Կրօնի յաւիտեական ճշմարտութիւնները ժողովրդական շեղում մը նստահար համոզիչ գրութիւններ ինքնագիր կամ ելուպական նշանաւոր հեղինակներէ թարգմանաբար:

Դ. Նախնեաց մատենագրութեան ընտելագոյններուն ժողովրդականացումը, ձեռնաս և հմուտ գրիչներու կողմէ աշխարհաբար թարգմանուելով:

Ե. Թեաղորդի պատմութիւններ, որոնք մերթ ընդ մերթ պիտի երեւան այս սիւնակներուն մէջ, իրիւ գործնական օրինակ մը ազնիւ զգացումներու, և թեաղորդ մը բարձր մտածումներու:

Զ. Ս. Գրական ուսումնասիրութիւններ:

Միւս կողմէ, արդարացնելու համար թերթին գրական հանգամանքը, խմբագրութիւնս դիմում քած է աղջկին մէջ ամէնէն աւելի սիրուած գրողներու, իրենց հիւժեղ ուսումնասիրութիւններով զարդարելու Տաճարի սիւնակները:

Աղջային բաժինին մէջ ամէն շաբթու պիտի ամփոփուին շաբթուան կարեւորագոյն լուրերը, գոհացում տալու համար սուսեկապէս գաւառի և արտասահմանի մեր այն հեռաւոր բաժանորդներուն, որոնք Տաճարէն սերիշ թերթ չեն ստանար:

«ՏԱՃԱՐ» Ի ԹՈՒՐԲԵՐԷՆ ԲԱԺԻՆԸ

Տաճար իր երկամեայ գոյութեան չրջանին մէջ, տարածուելով գլխաւորաբար հայախօս գաւառներու մէջ, մասամբ միայն կրցաւ կոտարել իր պարտականութիւնը: Բայց Փոքր Ասիոյ արեւմտեան կողմը շատ քաղաքներու մէջ Հայութիւնը դժբախտաբար կորսնցուցած է իր մայրենի լեզուն, և չունի թերթ մը ուր խօսուի իրեն Հայո՛ւ կրօնքին վրայ, Հայ առաքելական Եկեղեցւոյ ոգով:

Անցեալ տարիէն զանազան կողմերէ խնդրանքներ եղած էին խմբագրութեանս, գոհացում տալու այս պէտքին ալ, բայց համարձակութիւնը պակսեցաւ մեզի, գործին նիւթական դժուարութիւնը աչքի առջև ունենալով:

Նոյն դժուարութիւնները կան այսօր ալ, քանի որ Տաճար, իր ներկայ վիճակով, հազիւ թէ կարող կ'ըլլայ իր գոյութիւնը պահել: Բայց պէտքին ստիպողականութիւնը և բարեկամական յորդորներ ու քաջալերանքներ՝ կը մզեն զմեզ փորձ մը ընելու

Հետեւապէս երրորդ չրջանի առաջին թիւէն սկս կ'առաջադեալ ընենք — թերթիս 16 էջ հայերէնի մասը անխորիս պահելով — յաւելուածական ուր կ'ընեն տալ հայաստան թուրքերէն լեզուով և հոգեշահ բովանդակութեամբ:

Ասիկա պիտի շարունակուի անխափան երեք ամիս, և եթէ երբեք ժողովրդային քաջալերութիւնը գոյ աջակցել մեր ջանքերուն, պիտի շարունակուի ընդմիշտ:

Հետեւապէս Տաճար յառաջիկայ երրորդ չրջանին փոխանակ ճառերովեց երեւի, պիտի հրատարակուի քանդաւոր երես, ՆՈՅՆ ՄՆԱԼՈՎ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՅՄՈՒՆՆԵՐԸ՝ այն է Պալոյ և գաւառաց համար 40 ղրշ., և արտասահմանի համար 10 ֆր., կամ 2 տօլար, կամ 4 բուրլի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 50

ՅԻՍՈՒՍ

ԻԲՐԵԻ ՄԵԾ ՈՒՍՈՒՑԻՉ



ՎԵՀԱՓԱՌ

Տ.Տ. ԳԵՈՐԳԵ ՍՈՒՐԵՆԵԱՆՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

(ԸՆՏՐՈՒԱԾ 1911 ԴԵԿՏ. 13ԻՆ)

Իր ճիւղը, նպատակը, մեքստը, եւ բողոքած
տապաւորութիւնը:

Յիսուս իբրեւ Աստուծոյ Որդին եկաւ
տիպար ուսուցիչի մը խաչալը ներշնչելու
մարդկութեան: Հրէից մէջ իր ժամանակին
Բարբիները եւ զպիրները Մովսէսի օրէնքը եւ
մարգարէից գրութիւնները կը սորվեցնէին
ժողովուրդին՝ տառօական խմբատով, եւ յա-
ճախ նախնեաց սուսնաւթիւններուն հետ
խեղաթիւրելով: Իսկ Յիսուս՝ իբրեւ Բարբի՝
փոխանակ օրէնքին ու մարգարէից գրու-
թիւններուն կեղեկին ու տառին կառչելու,
անոնց բուն ոգին կ'աւանդէր իր ունկն-
դիրներուն: Դպիրներ եւ օրինականներ Հին
ուխտը մեքենաբար կը սորվեցնէին, եւ
իրենց խօսքերը Մովսէսի ու մարգարէնե-
րու հեղինակութեամբ կը չեղտէին: Բայց
Յիսուս ներքին համոզումով, եւ իբրեւ իր
անձնական փորձառութեան արդիւնքը,
գիտէր ինչ որ կը սորվեցնէր, եւ անոնց
ետեւ, «այլ եւս ասեմ ձեզ», իր անձնական
հեղինակութիւնը կը զնէր: Անոնք օրէնք
կը սորվեցնէին, իսկ Յիսուս սկզբունք
կուտար: Լերան քարովին մէջ անոր ար-

տալայտամ ճշմարտութիւնները բարոյական վեհ սկզբունքներու, կեանքի վսեմ խաւերներու յայտնութիւններն էին մարդկութեան: Հրեայ Բաբրիններու բերնին մէջ քաշկռտուած, ծամածուած ու աղճատուած օրէնքի մեռած տառերը՝ Յիսուսի բերնին մէջ նոր նշանակութիւն ստանալով, հոգիի և կեանքի կը փոխուէին: Ան հին ճշմարտութիւնները նոր իմաստով ուսուցանելու կերպը լաւ գիտէր: Ուստի զարմանալի չէ՝ որ կրցաւ գրաւել մարդոց ուշադրութիւնը, և հիացուց իր ունկնդիրները՝ իր ժամանակի ուսուցիչներէն աւելի: «Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխանութեամբ, և ոչ՝ որպէս գալիքն» (Մարկ. Ա. 22):

Յիսուսի ուսուցման նպատակն էր Աստուծոյ մասին ուղիղ գաղափար սալ ժողովուրդին: Նա իր ժամանակին մեծ արմատականն էր, իր ուսուցումները զարուհի ամենանոր գաղափարներն էին: Դպիրներ զԱստուծոյ իբրեւ արդար և վրիժառութեամբ մը կը ներկայացնէին ժողովուրդին, բայց Յիսուս կը սորվեցնէր թէ Աստուծոյ կարեկից ու սիրալիր հայր մըն է, և մարդիկ անոր որդիները: Անոնք՝ երկնից արքայութիւնը պիտի գայ, կ'ըսէին. իսկ Յիսուս՝ եկած ու նոյն իսկ ձեր մէջն է, կ'ըսէր: Յիսուսի ուսուցման ուրիշ մէկ նպատակն էր ձերբազատել ինկած մարդկութիւնը՝ կեանքի փշալից վտրձութենէն և մեղքի ազդեցութիւններէն: Երբ որ, կ'ուզէր իրեն նման ճշմարտութեան քաջ վկաններ ու ուսուցիչներ արտադրել, և իր նմանեաց ծառայելու ոգին արծարծել ունկնդիրներու մէջ: Յիսուս իւրաքանչիւր անհատի մէջ անհուն կարելիութիւններ կը տեսնէր, ուստի կը սիրէր զանոնք առանց խորութեան՝ ըլլան անոնք Հրեայ, Սամարացի, և կամ Փիւնիկեցի: Կը ջանար միշտ գիտակցութեան ոգի արթնցնել անոնց մէջ, և մղել զանոնք դէպի լաւագոյն կեանքը, որով ու իղձով մաքուր:

Սովորաւ իր վարդապետութիւնները սորվեցուցած ատեն՝ հարցումներ կ'ընէր, և ծանօթ քաներէն անծանօթը կ'երթար:

Փիլոն⁽¹⁾ այլաբանօրէն կը վարդապետէր: Հրէից Բաբրիններն ու դպիրները միտական մեթոտով կ'ուսուցանէին, «Աի գողանա՛ր, մի ապանանա՛ր, մի ջնար, մի տուս վիայե՛ր» ըսելով: Իսկ Յիսուս ընդհանրապէս դրականօրէն կը շեշտէր իր ուսուցումները, և կ'ըսէր. «Աւարե՛ք, եղբա՛ւր, հայցե՛ք»². հետեւաբար Յիսուսի խօսքերը աւելի ազդու և համոզիչ կ'ըլլային: Ահա մեթոտ մը որ մանկավարժական է և արդիւնաւոր: Իրաւամբ ըսուած է թէ, «Մէկը սովորաբար ուղիղ է իր հաստատական պնդումներուն մէջ, և միայ՝ իր միտական խօսքերուն մէջ»: Արդի կարծիքն այն է թէ Յիսուսի սորվեցուցած առակները, միայն մէկ երկուքը բացառելով, օրինակներ ու նմանութիւններ էին պարզապէս իր ուսուցումները հաստատելու համար, և ոչ թէ այլաբանութիւններ, թէ և Եկեղեցւոյ նախկին մեկնիչներ իբրեւ այլաբանութիւն՝ Յիսուսի առակներուն իւրաքանչիւր մէկ մասը յարմարցնելու կը ջանային իր քարուքած ճշմարտութիւններուն:

Յիսուս իր ուսուցումները կրնար յարմարցնել իր ունկնդիրներու վիճակին: Ուսուցիչի, ինչպէս քարոյիչի մը շատ բան գիտնալը կարեւորութիւն չունի, եթէ երբեք ան չգիտնայ յարմարցնել իր ուսուցումները ունկնդիրներու գիրքին ու ատիճանին: Սովորաւ համար կը պատմուի թէ նա ինքզինքը տգէտ կ'ենթադրէր, ուրիշները իրենց ագիտութեան մասին համոզելու համար: Յիսուս քաջ գիտէր թէ ինչպէս մօտենալ պէտք է մարդոց՝ զանոնք համոզելու և նոր ճշմարտութիւններ ըմբռնել կարողացնելու համար: Ամէն ոք կրնար Յիսուսէն բան մը սորվիլ, ան՝ ձկնորսներու համար ծովէն, երկրագործ ժողովուրդին համար արտէն, օրինականներու համար Մովսէսի գրքերէն կ'առնէր իր օրինակները, որոնք անոնց առօրեայ զբաղումներն էին: Երբ Սամարացի կնոջ հետ կը խօսակցէր, շատ պարզ էր իր նիւթը,

(1) Յիսուսի ժամանակակից (Ն. Ք. 20-54 Յ. Ք.) Հրեայ գրագէտ և հեղինամիտ փիլիսոփայ մը, որ այլաբանական մեթոտի հիմնադիրն էր:

բայց երբ նիկադրիմոսի հետ էր իր խօսքը՝ սկսաւ խորունկ բաներով զբաղիլ։

Յիսուսի լիզուն այնչափ պարզ էր որ մինչև իսկ աղաքներ դիւրութեամբ կրնային հասկնալ զայն։ Իր առակները, նմանութիւնները և առած օրինակները որչափ տրամաբանական և խորունկ էին իմաստով, այնչափ յստակութիւն կը ցուայնէին։ Իր սորվեցուցած Տէրունական Ազօթքը պարզ սակայն լի էր յաւիտենական ճշմարտութիւններով։ Բառքալ կ'ըսէր։ «Յիսուս այնքան պարզ կը խօսէր իր ուսուցումները, որ մարդ կը փորձուի ըսել թէ նա քնաւ խորհելու ճիշդ մը ըրած չըլլար անոնց վրայ»։ Նա կը պատուիրէր իր աշակերտներուն թէ պարզ ըլլան իրենց խօսքերը, «այո՛ւ այո, ոչն ոչ»։

Յիսուս իր օրինակներն և նմանութիւնները ընտելնէն կ'առնէր. կը սիրէր արտերու մէջ պտտիլ, դաշտի մէջ ծաղկած շուշաններէն, երկնից թռչուններէն, արաի հունձքերէն յաւիտենական մեծ ճշմարտութիւններ ու դասեր կը հանէր։ Իր բերնին մէջ ամենահասարակ բաներ, ջուր, հաց, լոյս, դուռ, հովիւ, այգի բառերը հոգի և կեանք կ'ըստանային։

Յիսուս քարոզիչ մը ըլլալէ աւելի ուսուցիչ մըն էր. սակայն իր ժամանակի ուսուցիչներուն նման չէր ուզեր որ իր վարդապետութիւնները գրուէին։ Քանզի ան լաւ գիտէր թէ գրուած բաները ինչպէս կրնային սխալ մեկնուիլ։ Իրմէ առաջ, ինչպէս իր ժամանակի Հռոմայեցի և Յոյն ուսուցիչները գրել կուտային իրենց ուսուցումները։ Յիսուս թէև գրուած բաները կը կարդար, բայց ինքը նախամեծար կը համարէր մարդոց մտքերուն ու սրտերուն մէջ գրուած տեսնել իր վարդապետութիւնները, քան թղթին վրայ։ Յիսուս աչքին աւելի կարեւորութիւն կ'ընծայէր քան ականջին։ Երբ Յովհաննէսի աշակերտները եկան իր քովը, անոնց բան մը չըսաւ, միայն ցուցուց։ Սովորաւ առաջինն էր որ երեւան բերաւ ճշմարտութիւնները ըմբռնելու կարողութիւնը մարդուն մէջ, այն է գիտակցութիւնը։ Պղատոն Սովրատի գաղափարը աւելի յառաջ տանելով

պնդեց թէ ամէն մարդ ընդունակ է ճշմարտութիւններ ըմբռնելու, պայմանաւ որ ներքնահայեցութիւն ունենայ. սակայն ինչ որ կը տեսնենք ու կը շոշափենք չէ իրականը, այլ ինչ որ կը խորհինք ու կ'երեւակայենք։ Զօր օրինակ, ծառը որ կը տեսնենք, միայն մեր գաղափարին մէջ իրականութիւն ունի. այսպէս՝ հայրենասիրութիւնը իբրեւ գաղափար միայն գոյութիւն ունի, և ամէն մարդ ընդունակ է այդ գաղափարները յղանալու և ըմբռնելու։ Արիստոտել, Սոկրատի և Պղատոնի երեւան բերած ճշմարտութիւնը աստիճան մը աւելի յառաջ տանելով, պնդեց թէ ճշմարտութիւնները, գաղափարները իրական չեն կրնար ըլլալ, ցորչափ շոշափելի ձևի մը տակ չեն մարմնացուիր. հայրենասիրութեան գաղափարը այն ատեն միայն իրական է, երբ գործնականապէս անհատին կողմէ արտայայտուի պատերազմի դաշտին վրայ։

Յիսուս այս երեք իմաստասէրներուն կիսատ կերպով յայտնած ճշմարտութիւնները Աստուածային իմաստութեամբ եկաւ գործնականապէս ցոյց տալ և ապրիլ. այսպէսով խօսքէն առաջ իր անձնական կենդանի օրինակը տուաւ իր հետեւորդներուն։

Յիսուս իբր ուսուցիչ շատ տարիներ չվտանց իր գործին վրայ, երեք տարի միայն գործի վրայ երեցաւ։ Շատ երկայն բաներ չսորվեցուց, ու էէ գրուած բան մը չաւանդեց իր աշակերտներուն, բայց իր թողած տպաւորութիւնը քսան դարերէ ի վեր աշխարհիս քաղաքակրթութիւնը յեղաշրջեց։ Նա կարող էր իր ուսուցումներուն հոտ իր նկարագիրը, և ճշմարտութեան ու գեղեցիկի գաղափարականը դրոշմել իր ունկնդիրներու սրտին մէջ։ Ուստի աշխարհ երբէք տեսած չէր անոր նման տիպար ուսուցիչ մը, որ ըլլար ներշնչող ու հիացնող իր ունկնդիրները, և թողած ըլլար մեծ տպաւորութիւն մը իր ետեւ, բիւրաւոր սրտերը մագնիսացնող։ Ինչպէս՝ Քարլ Շմիտ կ'ըսէ, «Յիսուս իր վարդապետութեամբ և գործունէութեամբ մեծագոյն ուսուցիչը և մարդկային ազգի դաստիարակն էր»։

Եկոյ Համարարան

ԳՐԱ. ՍԱՐԱՅԵԱՆ

մեզ հետ ամուր կապ մը . անգգայիորէն լուծուեր էինք իր մէջ , ու ինքն ալ արդէն կը համէր իր կոչումին բովանդակ գիտակցութիւնով իր տքնութիւններուն , աւաւցչի հալումաշունչներուն առջինն յատուկներուն մէջ : Մեզմով զուարթ էր , մեզմով երջանիկ ու — անգամ մը զգացնելու տկարութիւնն ունեցու — մեզմով հապարտ :

*
*
*

Տասը տարիներու յիշատակներէն իր խորմութեան բոլոր հրապարակը կը նկարագրի աչքի աչք օրը , ուր մտերմիկ չըջանակի մը մէջ կ'ըսէր թէ ահա հասած ենք չըջանին ծայրակէտը , ու կենսաբի փորձառութիւններէն հետզհետէ էջեր բռնալով կը սկսէր չօչափել իւրաքանչիւրիս տրամադրութիւնը , վանքէն դուրս ազգային գործունէութեան մասին : Վերջին դասն էր ան . ու ամէնքս ալ ընտրիր էինք մեր գործունէութեան գիծերը : Բայց , մեր բոլոր խէնարները սահմանուած էին լուսնակալութեան ժայռին վրայ խորտակուելու . . . :

Կը քայլէինք անհուն սրտազեղումներու մէջ , յաջողութեան լուսագոյն յայտնով . կ'երթայինք մոզովրդային ընդհանուր վարդապետի աշխատավայրը՝ պողպատէ մուրճերով պնտուած՝ որոնք հովուական ցուպերու փոխակերպուեցան : Ժամանակի ուրիշ աշխարհ կը հոսէր . մուրճը նախապաշարունակուելու և խաւարի մահը պէտք էր գաւաղանի ձեւը հագնէր . աւելին՝ արդիւնաւոր էր : Ու հիմայ Ոսմ . Սահմանադրութեան չըջանին , սկսելու համար գործի՝ պէտք է կարգի ապասել մինչև որ դրսերեցիծով չինտինք՝ աւարտեն քայքայումի գործերնին , ու չինտինք՝ դատուն անոնցմէ , աւերակներէն նոր կեանքի դարբնելու , Հայու ճակատագրական գործին ձեռնարկելու համար :

Բայց օրերը ինչ գանգաղ կ'անցնին :

ՍԱՅԱ Ս. Վ. ՕՏԱՊԵՆԱՆ

ԵՐԿՐԻ ԽՕՍՔ ԱԼ

ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԹԵՄԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ՇՈՒՐՁ

ՀՈԳ. ՏԷՐ ԶԱՐՄԱՅՐ ՔԱՅԱՆՍԻՆ

Կարդացի ձեր յօդուածը Տանարի 44 թիւին մէջ , և կը ստիպուիմ այս քանի մը տողերը գրել . մի միայն լուսաբանելու համար կարգ մը կէտեր , որոնք սխալ ներկայացուած էին ձեր տեսութիւններուն մէջ , արդիւնք ըլլալով այն անտեղեակ վիճակին , զոր դուք այդբովկիանտեան երջանիկ մահկանացուները կ'ապրիք Ամերիկահայ թեմի խնդիրներու մասին :

1. Դուք ձեր յօդուածով կ'ուզէիք ցուցնել , թէ էջմիածնի Կաթողիկոսական Տեղակալին և Պոպոյ Պատրիարքական Տեղապահին իմ ամերիկահայ առաջնորդութիւնս չվաւերացնելուն համար էր , որ կը գրէի թէ ազգային հոգեւոր վարիչներուն հրաժեշտ տուած է ողջմտութիւնը , և արդարութիւնը ապանուած : Ատանկ նկատուած մը չէի կրնար ունենալ բնաւ , քանի որ Տեղակալին ու Տեղապահին ՄԵՐԺՈՒՄԷՆ ԱՌԱՋ , էջմիածին զրկած իմ հրաժարագրովս ԽԱՊԱՌ կը մերժէի ամերիկահայ առաջնորդութիւնը , և կը խնդրէի որ կարող հովիւներ զրկեն հոս , այս պատուական գաղութը փրկելու համար վազահաս օտարացումէ մը : Եւ արդէն իմ խալառ հրաժարումս Տեղակալը կը յիշէր իր պաշտօնական մերժողագրին մէջ : Ես գրեցի ու պիտի պնդեմ մինչև վերջ , — եթէ իրերը այսպէս շարունակեն — թէ ազգային հոգեւոր վարիչներուն հրաժեշտ տուած է ողջմտութիւնը , և արդարութիւնը ապանուած , օրովհետեւ :

Ա. — Ազգային իշխանութեանց գլուխը գտնուող երկու անդուգական Տեղապահներ ինծի դէմ նիւթուած դիտումնաւոր խեղաթիւրումներու միջոցին , հակառակորդները միայն լսեցին , չուզեցին բացատրութիւն մը պահանջել ինչ , ինչ որ արդարութիւնն էր . և ասանկով տապաքայցը տուին թէ ողջմտութիւնը , արդարաւորութիւնը , և օրինաց յարգանքը հրաժեշտ տուած էին անոնց :

Բ. — Երբ ասկէ առաջ Դուրեանի Վարչութիւնը իր պաշտօնագրով յարմար չէր տեսներ իմ Թուրքիա մուտքս, և կը հրահանգէր որ ժամանակ մը դեռ տրտատանման մնամ, և երբ Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը Տեղակալին գրած իր պաշտօնագրով, ու Պոլսոյ Կրօն. Ժողովին տուած իր պատասխանով յայտնապէս կը ցուցնէր իմ անձիս դեռ գոյութիւն ունեցող վտանգը, երկու Տեղապահներուն պնդելը՝ որ ես վերադառնամ դէպի այդ մասնաճիւղած ու անօգուտ վտանգը, ապացոյց մըն էր թէ անոնց հրաժեշտ տրւած էր ազնուութեան ու ողջմտութեան ըմբռնումը:

Գ. — Դեռ աւելին ալ կայ այդ ողջմտութեան պակասը կարենալ տեսնելու և զգալու համար ազգային հոգեւոր վարիչներուն մօտ: Դուք կը գրէք թէ «Ազգէն ու Տ. Մուշեղ Եպ. Ի համակիր մէկ երկու թերթերէ դուրս, ամերիկահայ ուրիշ թերթերու կողմէ եղած շատ լուրջ առարկութիւններ տեսանք»: — Ձեր ակնարկած ինծի համակիր թերթերը այնքան ցայտուն ներքու չգրեցին ինծի համար. որչափ դուք գրեցիք ձեր երկու անհասական յօդուածներով, Տաճարի մէջ: Եթէ երբեք ազգային հոգեւոր վարիչները արդարութիւնը պիտի հիմնեն կուսակցական չիլ տեսութիւններով կուրցած անանուն և անպատասխանատու տղաքներու գրուածքին վրայ, այդ իսկ ապացոյց մըն էր ըսելու, թէ ազգային հոգեւոր վարիչներուն հրաժեշտ տուած է ողջմտութիւնը, եւ արդարութիւնը սպաննուած: Այդ կուսակցական թերթերէն ու անանուն և անպատասխանատու տղաքներէն բոլորովին անշատ, պաշտօնական մարմիններ գոյութիւն ունէին Ամերիկայի մէջ: Այդ պաշտօնական մարմինները, — Պատ. Հագաբարձութիւնները, խղճի ու ազգային պարտք մը կատարած ըլլալու կոչումէն տարուած, երբ ընդարձակ բողոքագրով իրաց կացութիւնը տեղեկագրեցին երկու Տեղապահներուն, եթէ անոնց մէջ ողջմտութիւն կար և արդարութեան սէր, ինչո՞ւ նկատողութեան չառնուեցան այդ պաշտօնական գրուածքները: Բայց

թող վստահ ըլլան բոլոր անոնք, որ արդարութիւնը կը խեղաթիւրեն և միաքիռ սիրտի դարավերջիկ հիւանդութեանը մը ժողովուրդի օրինական իրաւունքները կուղեն բռնաբարել՝ օրէնք, իրաւունք և արդարութիւն արհամարհելով, բոլոր անոնք օր մը սոսկումով պիտի տեսնեն պատուհասը, զոր այդ արհամարհուած ժողովուրդը և բռնաբարուած արդարութիւնը պիտի հիւսնեն իրենց գլխուն: Ու ալ ինչո՞ւ կը զարմանաք դուք, իմ արհաւիրհոտ բայց իրաւացի վերաբերումիս հանդէպ եկեղեցականներու, որոնք իրենց կոյուղին արժանաւորութեան եւ քարոյական պատասխանատուութեան ոգիէն զուրկ գտնուած ըլլալուն թովանդակ երոշխիքը տուին վերջերս ամբողջ ամերիկահայ ժողովուրդին, երբ անդին երկու հոգեւոր վարիչներ արհաւիրհոտ, անպատասխար և ապօրէն վերաբերումով մը ուղեցին ամբողջ ժողովուրդի մը պաշտօնական և օրինական արժանապատուութիւնը վիրաւորել:

2. Կը սրտնեղիք, երբ ամերիկահայ եկեղեցականութիւնը աչքի առջեւ ունենալով Արշակաւան կը կոչուի զանի: Վստահ եղիք, այդ անունին հայրութիւնը ինծի չպատկանիր: Գալիֆօրնիոյ ժողովուրդը ասկէ տարիներ առաջ զգուած Գաֆթանեանի և Նաղարէթեանի գործած շահատակութիւններէն, 1907 Հոկտ. 22 թիւ ընդունալ պաշտօնագրով մը Գաֆթանեանին կը գրէր. «... Այս ամիսէն վերջ ինչո՞ւ դարձանալ այլեւս, երբ ժողովուրդը կը գայթակղի և հետզհետէ կ'ուժանայ մեր եկեղեցիէն, ինչո՞ւ իրաւունք չտալ այն անձանց, որք կ'ըսեն թէ մեր եկեղեցին նոր Արշակաւան մը դարձած է, ուր իր խոժեռ անդադոյական, ոճրագործ և ոճրաբոյժ, և իրենց կոչման անարժան եկեղեցականներ»: Եւ Ֆրէզնոյի մէջ աչք, դատողութիւն և զօն ունեցող մարդիկ աւելի շատ պիտի գտնէք, քան ձեր շուրջը:

3. Դուք կը շփոթէք Ամերիկահայ Տարեցոյցին հեղինակը և անոր աշխատակիցներուն անձը: Ամերիկահայ Եկեղեցականութիւնը յօդուածին հեղինակը, որ այնքան ձեռնհասութիւն տնի իր նիւթին մէջ,

որքան թերեւս չափ մը եկեղեցականներ և նոյն իսկ եպիսկոպոսներ չունին գծրախտաբար, վստահ եղիք որ չափ աւելի կարող աչքով դիտած է մարդերն ու անոնց կեանքը, քան ինչ որ դուք պիտի չկրնալիք ընել ձեր հեռուի ըմբռնումներովը: Մանաւանդ, որ հմուտ յօգուածագիրը իր փաստերը քաղած է, ինչպէս կը տեսնէք, պաշտօնական արձանագրութիւններէ: Լաւ պիտի ըլլար, որ ձեր ներքուցած (էջ 700 երկու եկեղեցականներէն առաջինին մասին անդամ մը մտիկ ընէիք դատաստանը ընդէ: Ամերիկայի և մասնաւորապէս Նիւ-Եորքի ողջամիտ և յիտակ դատակարգին, զգալու համար թէ որքան երեւակայական են ցնորքը այն օգտակար ձեռնարկներուն?, որոնց վրայ կը հիմնէք ձեր գնահատումի բազմը, իսկ երկրորդին համար հարցուցէք միայն Մանչեսթըր, Պոսլոն, և Ֆրէզնո:

4. Կը գրէք թէ Մուշեղ Եպիսկոպոս գլխաւորութիւններ յարուցած է այս կամ այն կուսակցութեան թմբուկը զարնելով ընդդէմ ուրիշ կազմակերպութեանց, և Հ. Ս. Ռ. Կուսակցութեան ծրագիրը ազգին հերկայ վիճակին մէջ ամենէն օգտակարը հիշատակով, անոր համակիր մը ըլլալնից յայտնելէ վերջ, խորհուրդ կուտաք, որ ամենեւնի ալ մեր զաւակները նկատենք, ինչպէս ըրաւ, կրէք, Գուրեան Սրբազան, իր յիշատակելի բանախօսութեանը մէջ: — Եթէ ստուգել մէկը համակիր է ու է կազմակերպութեան, անոր համար, որ անոր ծրագիրը օգտակար կը դառնայ ազգին, ինքնին բարոյական պարտականութիւն մը պիտի զգայ իր վրայ տարածելու այն ծրագիրը, գործելակերպը, ուղղութիւնը, որուն կը հաւատայ, և այդ ընելով այս կամ այն կուսակցութեան թմբուկը զարկած չըլլար բնաւ: Երբ դուք բոլոր կուսակցութեանց շաւաղոյն կողմերուն հաւակիր մը ըլլալով հանդերձ, կը նախընտրէք Հ. Ս. Ռ. Կուսակցութեան ծրագիրը, իր ամենեւնի օգտակարը, այդ իսկ կը ցուցնէ թէ միւս կազմակերպութեանց լաւագոյն կողմերուն քով, յոռի կողմեր ալ տեսած եմ, որոնց չեմ հաւանիր, եւ որոնց վնասակարութեանը կը հաւատամ:

Քեանը կը հաւատամ: Առանց այս հաւատքին կարելի չէր երբեք Հ. Ս. Ռ. Կուսակցութեան համար ձեր նախադրութիւնը արդարացրնել: Դուք բոլոր կուսակցութեանց լաւագոյն կողմերը կը ցուցնէք, ու ձեր համոզումներուն և նախադրութիւններուն պատճառ ուսույ յոռի կողմերուն մասին կը լռէք: Արդ, հոս կը սկսի մեր և ձեր տարբերութիւնը, եւ յոռութիւններու հանդէպ լռելու առաքինութիւնը չունիմ բնաւ: Ծշմարտութիւն մը ճշմարտութիւն ըլլալը խոստովանելով չեմ կրնար բաւականանալ ու ծաղապատիկ նստիլ: Պէտք է ճշմարտութեան յայթափակին աշխատիլ, յոռութիւնները, վստուութիւնները յաղթելով: Եւ կ'ընդունիմ սկզբունքը թէ պէտք է ամենեւնի ալ մեր զաւակները նկատենք, բայց ընդունինք միեւնոյն ժամանակ թէ հայր մը, երբ հաւատար աչքով կը նայի և հաւատար սիրով կը սիրէ իր երկու զաւակները, որոնցմէ մին տունը կը շինէ, մինչ միւսը տունը կը քանդէ, երբ հայր մը իր արդար զայրոյթը չկրնար յայտնել աշխուժ և քանդումի նախադրութեան մը հանդէպ, և երբ պէտք եղած հայրական իշխանութիւնը չգործածեր իր անուակ զաւակին զգաւորութեանը համար, այդպիսի հայր մը դաւաճանած կ'ըլլայ ո՛չ միայն իր հայրութեան կոչումին, այլ և իր մարդկայնականազգային պատասխանատուութեան: Եւ անա այս համոզումներու բերմամբ է որ չեմ կրնար ո՛չ Գուրեան Սրբազանի ընթացքը որդեգրել, և ո՛չ ալ նախադասե ձեր լռութիւնը ու է կազմի յոռի կողմերուն հանդէպ:

5. Ստացէք է թէ «Մուշեղ Եպիսկոպոս որքան ալ տաղանդաւոր, պերճախօս, գրական անվիճելի կարողութեան տէր ըլլայ, միակը չէ՛ Հայ եկեղեցականութեան մէջ. քեզմոլեմ մը չէ...»: Եւ բարեբախտաբար ինքզինքնիս քեզմոլեմ մը չեմ կարծած բնաւ: Պիտի սիրէի հաւատալ, և պիտի փափաքէի որ Հայ եկեղեցականութիւնը օր ուսուր օժտուէր, մի՞նչու աւելի կարող, ու աւելի արժանաւոր անդամներով, ուժերով: Անցեալները ինքզինքս,

և ամբողջ Հայ եկեղեցականութիւնը ափսոսացի, ինքզինքս չըջապատուած տեսնելով 33 եպիսկոպոսներով, 60 երէցներով, և 150 դպիրներով, Ֆիլատելֆիոյ մէջ Անկլիքոն եկեղեցին եպիսկոպոսական ձեռնադրութեան մը պահուն, և որոնց ամէնքն ալ առանց բացառութեան համալսարաններու չըջանաւարտներ էին, D. D. ափսոսով, իսկապէս փոխադրեալ, բայց այս րաւին ո՛չ հայկական, սիրացող խմատովը:

Այս տեսակ մարդերու պէտք ունի Ամերիկահայը, իր հոգեւոր և ազգային կեանքը կարենալ փրկելու համար ապա՝ ժաման խորթացումէ մը: Թող հոգեւոր վերին իշխանութիւնները այդ տեսակ հովիւներ զրկեն Ամերիկահայուն, վստահ ըլլալով թէ պիտի սիրուին անոնք, և ես իմ դուզնաքիս կարողութիւնս անպայօս կերպով ի սպաս պիտի դնեմ իրենց Հայ ժողովուրդի բարձրացումին, և այս օտար ափերուն վրայ Հայ եկեղեցիի փառաւորութեանը համար:

15 Դեկտ. 911, Ռուր ՄՈՒՇԵՂ, ԵՊԻՍԿՈՊՈՍ

* *

Խմբագրութիւն «Տաճար»ի

Ազգին ամէնէն տաղանդաւոր և բարձրաստիճան եկեղեցականներէն մէկուն խոսելու ազատութիւնը կապուած չըլլալու համար, փութացինք հրատարակել Տ. Մուշեղ Եպ. ի այս երկրորդ գրութիւնը, որուն բոլոր կէտերուն պատասխանել դուրս է մեր նպատակէն, քանի որ աւելորդ վէճ մը երկարել չենք ուզեր: Բայց անհրաժեշտ կը նկատենք մէկ երկու պարզ զիտողութիւն և լուսաբանութիւն, որոնք վերջինը պիտի ըլլան մեր կողմէ:

1. «Ազգին Հոգեւոր Վարիչները ողջմտութենէ զուրկ և արդարութիւնը սպաննողներ» կը հռչակուին այս երկրորդ անգամ աւելի ուժգնութեամբ, մենք կը կրկնենք թէ լոկ անձնական խնդրի մը պատճառով, — որ կրնար ուշ կանուխ կարգադրուիլ վարչական եղանակով — բարձրաստիճան հոգեւորականի մը կողմէ բացարձակապէս անդէպ էր՝ և է՝ այս կարգի որակում մը ազգին երկու բարձրագոյն Աթոռներու ներկայացուցիչներուն, որոնց առաջինը՝ Ըսենք անցողակի՝ Իջման Տաճարին մէջ հաւաքուած համագլխային ընտրողական ժո-

ղովոյ անդամոց մեծամասնութիւնն քուէովը պատուուած և կոչուած է զրաւելու Ս. Լուսաւորչի նուիրական Գահը: Վայրկեան մ'իսկ չենք կրնար ենթադրել որ ի սիրու աշխարհի ցրուած Հայութեան ընտրեալ ներկայացուցիչները կուրացած ըլլան՝ «ողջմտութենէ զուրկ և արդարութեան թշնամի» անձ մը այդքան մեծ պատուի մը բարձրացնելու ստտիճան: Չենք ալ կրնար ենթադրել որ մասնաւոր զիտումով մը այդ Հոգեւոր Վարիչները անտեսած ըլլան ժողովուրդին ձայնը, որուն անովջական նկատառումը եկեղեցական և ազգային գերագոյն շահերու տեսակէտով կարելի չէ եղած ապահովաբար, կամ գուցէ ժողովրդային այդ ձայնին հակադրող հակակշռող ուրիշ ժողովրդային ձայնի մը ականջալուր եղած են: Ամէն պարագայի մէջ մենք ազգին Հոգեւոր Վարիչներուն դասը պաշտպանելու համար չէ որ կը զրկենք այս սողերը անհատական համոզում մ'է որ կը յայտնենք, լոկ ազգային հոգեւոր իշխանութեան գիրքը, բրեւիթը բարձր բռնելու նախանձախնդրութեամբ: (*)

2. Նոյնպէս բռնաւոր և արդարացի չենք գտնել որ մէկ երկու անարժան եկեղեցականի թերութիւններուն պատճառով վարկաբեկուի ամբողջ եկեղեցական դասակարգը, և այս՝ եպիսկոպոսի մը կողմէ: Ժողովուրդը, մասնաւոր Ամերիկայի պէս ազատ երկրի մը մէջ, մէկէ աւելի միջոցներ ունի պատժելու անարժան եկեղեցականները: Մեր կարծիքն այն է որ բացարձակապէս անուղղաներուն արժանաւոր և խիստ պատիժ մը տրուելով հանդերձ, չատ աւելի օգտակար պիտի ըլլար սիրաշահիլ միւսները: Ժողով պաշար չունեցողներուն զարգացման ճամբան ցուցնել, զանոնք նիւթապէս ու բարոյապէս բարձրացնել, գործակիցներ ընել առաջադրուած ազնիւ նպատակի մը, և ոչ թէ արհամարհանքով և թշնամանքներով հակառակորդներ պատրաստել անոնցմէ: Տ. Մուշեղ Եպսկ.

(*) Փութանք աւելցնել որ քննողատեսիլ երաւունքը ամէն ոք ունի՝ որով մասին ալ ըլլայ, բայց այլ է քննողատեսիլին, այլ է թշնամանք:

կրնար գլուխ հանել այս գործը. բայց զժ-
բախտաբար կը տեսնուի թէ չէ ըրած:

3. Թէ Տանաթի իմրագիրը այս կամ այն
կուսակցութեան յուր կողմերը տեսնելու
տանն չէ լռած, ապիկայ կը հաստատուի
թերթիս երկու տարուան հաւաքածոներով,
որոնց մէջ կը տեսնուի թէ, մասնաւորա-
պէս «բայ կամ գոցի» խնդրոյն ժամանակ,
ճիշդ Տ. Մուշեղ Նպի փափաքած ուղղու-
թիւնը բռնած էինք, հոգ չընելով մէկէ շատ
աւելի բաժանորդներու կորուստը: Խնդիրը
եկեղեցիի շուրջը կը դառնար, և մեր խիղ-
ճը չէր թողատրեր լուռ մնալ այնպիսի
տանն մը երբ հարկ էր խօսիլ: Մեր ըսել
ուզածը սխալ հասկցած է Տ. Մուշեղ Նպիսի:
Մեր փափաքն էր — և է — եկեղեցակա-
նութիւնը վեր տեսնել ամէն կուսակցու-
թեան: Հոգեւորական կուսակցութեան կը
պատկանի ան, Բիւսոնեան կուսակցու-
թեան, և պարտաւոր է գօտեանդուիլ ու
պայքարիլ ամէն անոնց դէմ որոնք եկե-
ղեցին քանդել կ'ուզեն, կրօնքը՝ հեռաւ-
պէս նաեւ բարոյականը՝ վերցնել: Այս է
իր գերագոյն պարտականութիւնը: Ասոյէ
զուրս երբ կուսակցական վեճերու միջա-
մուխ կըլլայ եկեղեցական մը, շատ կը
պզտիկնայ:

4. Իր գրութեան ճիշդ կէտին լիովին
համամիտ ենք: Ազգին թշուառ վիճակին
հայելին է Հայ եկեղեցականութիւնն ալ:
Մարդ որտի մորմնաբուսով կը զիտէ մեր
եկեղեցականութեան (սակաւաթիւ բացա-
ռութիւններով) իմացականապէս և նիւ-
թապէս — կրքեմն բարոյապէս ալ — ինկած
վիճակը, բարդամամբ Լուսին և Բողո-
քական եկեղեցականութեան, որոնք ընդ-
հանրապէս բարձր զարգացում ունեցող
մարդիկ են, համալսարանականներ, ասո-
ւածաբանութեան տաքսիներ: Այս իտեպ
վիճակը ձեռք բերելու լաւագոյն միջոցը
չէ սակայն արհամարհանքը գանուածնե-
րուն հանդէպ: Պէտք է պահանջել զա-
նոնք: Այս է ժողովուրդին պարտքը.
սխալ մ'է տալէ առաջ պահանջել: Հայ
եկեղեցականութիւնը, բազմաամամբ իր
նիւթական ու բարոյական նկուն վիճակին,
գիտցած է համեմատական բարձրութեան

մը վրայ մնալ: Խօսելով մասնաւորապէս
Ամերիկահայուն վրայ, շատ զժուար պիտի
ըլլար, — չըսենք անկարելի — փրնոտուած
խաչալ եկեղեցականը դանել իրենց հա-
մար, և գանուածն ալ շատ հաւանա-
բար չպիտի յօժարէր երթալ: Լաւագոյն մի-
ջոցն է այդ եկեղեցականը ճեղչել վրայ
պահասել: Ամերիկահայ պատուական գա-
ղութը բարձր մտաւորականութիւններ կը
կը համրէ այսօր իր մէջ: 50,000է աւելի
Հայեր կը գտնուին այսօր Նոր Աշխարհին
մէջ, որոնք նիւթական բարեկեցիկ դիրքի
աէր են և իրենց ազգասիրական եռանդին
հնչուն ապացոյցը ստեղծ են միշտ: Բիշ մը
կամք և քիչ մըն ալ զոհողութիւն պիտի
բաւէր որ 10—30 երիտասարդներ հեռա-
ւին Աստուածաբանական Համալսարաննե-
րու դաստիարակութեանց, և վկայեալ տաք-
սիները գաւառապէս ետքը, ծառայեն Հայ
եկեղեցիին՝ իբրեւ քահանայ, վարդապետ,
եպիսկոպոս, առաջնորդ: Իր ամէն տա-
ւելութիւններուն հետ մէկտեղ, Ամերի-
կան և Ամերիկահայր մօտէն ճանչնալու ա-
ռաւելութիւնն ալ պիտի ունենային անոնք,
և տարիներու չափով կարօտէին ծանօթա-
նալու միջավայրին պէտքերուն ու բար-
քերուն: Խորհրդեր որոնք գծախտաբար
բաւական կ'ըլլան յաճախ տիրացուական
վէճեր յարուցանելու իրենց շուրջը, որմէ
յետոյ անկարելի կ'ըլլայ ու է օգտակար
պաշտօնավարութիւն:

Պիտի փափաքէինք որ Տ. Մուշեղ
Նպիսի, իր գրական (*) ու քարոզչական
արդիւնաւոր գործունէութեան կարեւոր
նպատակներէն մին ընէր եկեղեցականու-
թեան բարձրացումը, սկսելով Ամերիկահայ
հոգեւորականութենէն, չհարկադրուելու
համար Դիոքլինէսի լապտերով իրենց միջա-
վայրին յարմար ու կարող եկեղեցականներ
փնտռել, արժանաւոր կղերականի սովին
մէջ ուր կը գտնուինք:

* * * Վերջացնելու առթիւ կարծեաց այս

(*) Իր գրական արդիւնաւոր գործունէութեան
նոր ու փայլուն մէկ գրաւականն է «Ամերիկահայ
տարեցոյցը», որու մասին պիտի խօսինք յառաջիկայ
թիւով մը:

փոխանակութիւնը, որուն երկարաձգման թույլատու չեն Տաճարի տիեալները — էապէս ժողովուրդին հոգեւոր ու բարոյական կեանքի շինութեան նուիրուած —, կը հաւատանք մեր Սրբազան ընդդիմախօսին թէ այս կամ այն կրօնական կամ ազգային ինդրոց մասին իրեն ու մեր միջև գտնուած կարծիքի տարբերութիւնները երբեք չեն պակսեցներ մեր յարգանքը, զոր ունինք իր ատղանդին ու եւանդուն գործունէութեան հանդէպ:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՎԵՐՋԻՆ ՓՈԻԼԸ

Հողային հարցը, իր կնճռատութիւններով այնքան ուշագրաւ հանգամանք մը տուեցած է, որ կենաց և մահու խնդիրի մը փեճակն ունի այժմ, երկրագործ Անտատլցիին համար:

Այդ մասին թէպէտ մինչեւ հիմայ այլ և այլ հակառակման և իրար չեզոքացնող հրաւաններ և որոշումներ իմացած էինք, սակայն Պետական Խորհուրդին մէջ վերջերս եղած խորհրդակցութեան մը հետեւանքով, շատ աւելի հակառակման և անհետեւական հրամանով մը նոր փուլի մը մէջ կը մտնէ սոյն խնդիրը:

Ըստ այդ հրաւանագրին, թշուառ հողագործ զաւառացին՝ ամէն յոյս ծալել ծրարել ու «միւլթէկալիպէ»ներուն ձեռքը հայելէ ուրիշ բան մը չալիտի կրնայ ընել:

Այդ օրէնքի՝ չափ նշանակութիւն ունեցող Հրամանագիրը՝ կ'ըսէ. «Երբ անշարժ կալուածներու մասին վարչական ժողովներու խնդրագիր տրուի, նկատի առնել պէտք է, թէ արդեօք քափու ունի խնդրարկուն. եթէ ունի, պէտք է նաեւ թուրքեային հարցնել թէ արդեօք ան ալ ունի՞ քափու: Երկուքին ալ ունեցած պարագային նկատի պէտք առնել այն քափուն՝ որ աւելի նոր թուական կը կրէ, և հին թուական կրող քափունին տիրոջ իրաւունք տալու եւ որ դատարան չիմէ:»

Այս համառօտ հատուածը գերեզմանն է հողային հարցին: Վասն զի վարչական ժողովոց մէջ առ հասարակ առաջնորդներ

և հայ անդամներ կրնան և ի վիճակի են խեղճ ժողովուրդը պաշտպանելու. մինչդեռ զատարանն անկախ է, և մինչեւ մէկ աստիճան՝ ան Պարսկական պատմութեան Ֆերաւուշխանիին կամ Անյուշ բերդին կը նմանի: Թուլթ մը կ'երթայ, զայն կ'ըլլայ. խաւճը կ'առնուի, իսկ որոշումը, տարիներու գործ է...:

Նկատի առնենք հիմայ թէ, մանաւանդ որ տեսիլէտէն կը վնասուի այդ հրամանէն՝ Հայութիւնը:

Հողային հարցի ամենէն յաճախողէպ կնճռատութիւնն հոն է, որ Հայ ժողովուրդը՝ Համիտեան սարսափներէն մազապուր ազատած՝ չունին արտասահման առաւ, հոն իր կեանքն ու գոյութիւնը պահպանելու համար, և թողուց իր ամէն լնջը: Այսպիսի յաճախողէպ պատահարներով գեղեր ու գեղեր ամայացան. այդ հողերուն վրայ աղաներ կամ պիկեր ձեռք դրին. և իրենց անունով քափու կարել տուին:

Այսօր երբ պահուելու Հայը կը վերադառնայ՝ տէր ըլլալ կ'ուզէ հողին, ցոյց կուտայ իր քափուն և մենք ու Հայ և թուրք բարեխիղճ պաշտօնեաներ զիսինք թէ իրաւունքն ու արդարութիւնը կը պահանջեն որ ետ դարձնել սանք այդ հողն իր սեպհական տիրոջ: Բայց անդին պետական խորհուրդը. առանկ աղաներուն եւ պիկերուն նպաստաւոր վճիռ մը կուտայ. պայմանով որ աղքատը երթայ քաշքշէ իր գոյութիւնը՝ օսմ. դատարաններուն դուռը, ուրկէ դուռն ուրեք արդարութիւնը դուրս կուգայ:

Եւոր փուլի մը մէջ մտած է ըսել է Հողային Հարցը, որ Հայուն գոյութեան ու տեւականութեան խարխիռն է խակապէս և իրաւապէս:

Հինչեւ հիմայ՝ Հայ ու Բուրդ աղքատ գաղափարներ իրաւունքը կը պաշտպանուէր մինչեւ մէկ աստիճան՝ վարչական ժողովներու մէջ. ասկէ վերջ, այս նշանուար հրամանագիրը կ'արգիլէ զմեզ միջամուխ ըլլալէ, փորձն առնուած ըլլալով որ այսպէս պիտի յշտանան միւրեկալիպեները, որոնց մասին արդի կառավարութեան բռնած այսքան բարեացակամ ընթացքը անհասկնալի կը մնայ:

Այս ամառ Յունիսի վերջերը Կարնոյ հրաբխի կուսակալ և արդի ներքին գործոց լուսամիտ նախարարը (*) անակցութեան մը մէջ կը խոստովանէր թէ արդարեւ Հոլանտի Հարցը շատ հիւսնդոտ ու ցաւազին հարց մըն է, և անհրաժեշտ է զայն լուծել:

Տրուած ըլլալով Ն. Վահմութեան ուղղամտութիւնը, կարողութիւնն ու բարեացակամութիւնը. կը սիրենք յուսալ թէ Երիզայի, Կարնոյ, Քէմախի, Բաքերդի ու Ղուչուջանի իր շրջանային այցելութիւնէն քաղած մասնաւոր փորձառութեամբը օգտակարապէս պիտի ջանայ լուծել այս հարցը, երբ մանաւանդ այնքան պատասխանատու և ուղղակի այդ խնդրոյն հետ ճիշդ ազերս ունեցող պաշտօնի մը գլուխը կը գտնուի ինքը: Ասիկա կը սպասենք երբեմնի մեր որոցաւ կուսակալէն:

Աղգ. Պատրիարքարանն ալ, որ օրը օրին ապրող մարմին մըն է, ժամանակ առ ժամանակ միայն, երբ նշանակելի դէպքեր պատահին, միտքը կ'իյնայ այս հարցը քըրքըրել, մինչ ապիկայ է Հայուն մահու եւ կենաց խնդիրը. որուն լուծումը, կամ Հայ ազգին լուծումը, բնաջնջումը, կախում ունի պետութենէն, և որուն քով ժողովուրդին թարգմանն է Աղգ. Պատրիարքարանը:

Չի բուեր միայն ժամանակ առ ժամանակ մասնաւոր խնդիրներու մասին քաջիւր մատուցանելը. հարկ անհրաժեշտ է, որ իբր գոյութեան հարց, լուրջ ուշադրութեան առարկայ ընէ զայն:

Այս վերջին հրամանագիրը կուգայ մեր թիւերը կապել, և նահատակ ժողովուրդին մորթատումին ու թշուառացումին անհուն տեսնալ ըլլալու վիճակին կ'ենթարկէ զմեզ:

Հայ ժողովուրդը հողին կապուած խաղաղաբնակ տարր մըն է. անոր հո՛ղ պէտք է. և քանի որ կառավարութիւնը կը մերժէ կամ այսպէսով անոր իրաւունքը կ'ոտնակոխէ, անհրաժեշտ է որ Պատրիարքարանն ալ իր ներկայացուցած ժողովուրդին արդար իրաւունց տէրն ըլլայ:

(*) Այժմ հրաժարեալ ձէլալ պէյ (Ծ Խ.)

Կարուկ ու հասկնալի չարժուժ մը անհրաժեշտ է այլեւս, այս խնդրոյն լուծումը ձեռք բերելու համար. և այս կը սպասենք Աղգ. Պատրիարքարանէն:

Հրժ. Առաջնորդ Հայոց Բողի
1911 Նոյ. 28, Բողի ՊՍԱԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՍ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ

Նախընթաց թուով տեղեկութիւն տուած էինք Երաժշտ. Յանձնաժողովոյ նպատակին և աշխատութեանց վրայ: Ըստ մեր խոստման այսօր կը հրատարակենք անոր կոնոնագիրը՝ Կրօն. Ժողովէն վաւերացուած. —

Յօդուած Ա. — Հայ Եկեղց. Երաժշտական Յանձնաժողովը՝ ըստ Հրահանգի Երաժշտական Յանձնաժողովի՝ կը բաղկանայ ութ երաժշտագէտ և ձեռնհաս անձներ, որոց չորսը եկեղեցական և չորսը աշխարհական կ'ըլլան: Յանձնաժողովը տնի իր Դիւանը՝ կազմուած Աստեապետէ մը և Աստեաղաբէ մը, որ կ'ընտրուի Յանձնաժողովին քուէովը և կը շարունակէ երկու տարի:

Յօդ. Բ. — Երաժշտական կարեւոր ձեռնարկներու առթիւ Յանձնաժողովը կը հաստատէ ի նիստ Պոլսոյ մէջ գտնուած թէ՛ եկեղեցական և թէ՛ աշխարհական մասնագէտ երաժիշտներ՝ ի խորհրդակցութիւն:

Յօդ. Գ. — Երաժշտ. Յանձնաժողովը երաժշտական կենտրոնական հարցերու և երգեցողութեանց բարեկարգ կոնսոնտորման և միօրինակութեան վերաբերեալ խնդրոց համար գէթ տարին մէկ անգամ ընդհանուր երաժշտական ժողով կը գումարէ:

Յօդ. Դ. — Ընդհ. Երաժշտական ժողովի կը մասնակցին երաժշտագէտ եկեղեցականներ, երաժիշտ մասնագէտներ, և երաժշտագէտ վկայիկալ ուսուցիչներ, զարուպեաներ և Դպրաց Դատու Տնօրէն Պորհըրդոյ Դիւաններ, ինչպէս նաեւ Առաջնորդական Թիմերու մէջ գտնուող երաժշտագէտները գրաւոր կամ անձամբ՝ եթէ դիւրութիւն ունին:

Յօդ. Ե. — Յանձնաժողովոյ կողմէ կ'ընտրուին մայրաքաղաքիս, դաւառներու և

արտասահմանի համար ուղղուած երաժիշտ ուսուցիչները, յետ կանոնաւոր բանակցութեան:

Յօդ. Զ. — Երաժիշտ. Յանձնաժողովի կողմէ կը կատարուին երաժիշտ դասատուի վկայական ստանալ փափաքող անձանց օրինական քննութիւնները: Յանձնաժողովը ընտրելիէն պահանջելի բոլոր հանգամանքներուն, հմտութեան չափին և տեսակին իրազեկ ըլլալէ յետոյ, կուտայ ընտրելիին կարողութեան համաձայն երաժիշտ ուսուցչի վկայագիր, որ կը վաւերացուի Կեդր. Կրօն. Ժողովոյ կողմէ:

Յօդ. Է. — Երաժիշտ Ուսուցչի վկայական ստանալու համար անհրաժեշտ է որ ընտրելին լրացուցած ըլլայ 20 տարիքը, ի ձեռին ունենայ բարի վարուց վկայագիր մը՝ վկայուած թաղին Թաղ. Խորհուրդէն և Աւագերէցէն, և Դպրաց Դասէն եւս վկայական մը թէ ի մանկութենէ հետեւած է Դպրութեան. հմուտ պէտք է ըլլայ հայ լեզուի, և այս կէտը ապացուցանող վկայագիր մը պէտք է ունենայ դէթ թաղային վարժարանէ մը:

Յօդ. Ը. — Վկայագիրները երկու կարգի կը բաժնուին. — Ա. կարգի և Բ. կարգի վկայագիր: Բ. կարգի վկայագիր ստանալու համար ընտրելին պէտք է հմուտ ըլլայ հայ կամ եւրոպական ձայնագրութեան և հայ եկեղ. երաժշտութեան. այսինքն պէտք է ուսումնասիրած ըլլայ ութ ձայները՝ իրենց դարձուածքներով, կարող ըլլայ երգելու քաղուածոյները և մանուսանդ պարզ ժամաստացութիւն. իսկ Ա. կարգի վկայագիր ստանալու համար անհրաժեշտ է հինգ տարուան պաշտօնավարութիւն մը Բ. կարգի վկայականով: Ա. կարգի վկայական ստանալ փափաքողները պէտք է կատարելապէս հմուտ ըլլան Հայ և Եւրոպական ձայնագրութեան. նմանապէս պէտք է լաւագոյն կերպով ուսումնասիրած ըլլան շարականի բոլոր եղանակները և մանրամասնութիւնները:

Յօդ. Թ. — Առաջարկութեամբ Երաժշտական Յանձնաժողովին՝ Կեդր. Կրօն. Ժողովոյ կողմէ մասնագէտ-երաժշտապետի կոնդակ կը տրուի երկար պաշ-

տօնախորութիւն և երաժշտական հեղինակութիւն ունեցող փորձ և ընդհանուր և կեղց. երաժշտութեան հփուտ երաժիշտներու:

Յօդ. Ժ. — Թաղ. Խորհրդոյ կողմէ եկեղց. երգեցողութեան և կամ ու է ինչդոյ մասին գտնագատ կամ դիտողութիւն պէտք է Աւագերէցին ուղղուի, որ կը կարգադրէ Տնօրէն Խորհրդոյ հետ համախորհուրդ. հակառակ պարագային Աւագերէցին կողմէ և միջոցաւ կը ներկայացուի Երաժշտ. Յանձնաժողովին:

Յօդ. ԺԱ. — Երաժիշտ. Յանձնաժողովը, մօտէն քննելու համար երաժիշտ դասատուներու պարտականութեանց կատարումը, Դպրաց Դասերու աշխատութիւնը և Տնօրէն Խորհրդոյ գործառնութիւնները, կը զրկէ պատուակալ Տեսուչներ՝ հարկ եղած եկեղեցիները, և քննութեան արդիւնքին տեղեկանալէ յետոյ կը անօրինէ զարժանն:

Յօդ. ԺԲ. — Երաժիշտ. Յանձնաժողովը իր մէջէն պարբերաբար կարգած պատուակալ Տեսչին միջոցաւ ոչ միայն Դպրաց Դասերու ընդհանուր քարեկարգութեան կը հսկէ, այլ նաև Յանձնաժողովին հրահանգներուն անատուող և երգեցողութիւններն ըստ կամս կիրարկող երաժիշտները Կրօն. Ժողովոյ հաւանութեամբ սաշտօնանկ կ'ընէ:

Յօդ. ԺԳ. — Երաժիշտ. երգեցողութիւնները միօրինակ պիտի երգուին առէն Եկեղեցեաց մէջ. քիմաժին յաւերումներ և նախորդ խեղաթիւրումներ երբէք ներքի չեն. հետեւաբար Եկեղց. երգեցողութեանց վերաբերեալ ու է խնդրի կամ քարեկարգութիւն պէտք է Երաժշտական Յանձնաժողովի զիտութեամբ և հաւանութեամբ եղած ըլլայ:

Յօդ. ԺԴ. — Եկեղց. երաժշտութեան վերաբերեալ ու է հեղինակութիւն պէտք է նախապէս Երաժշտ. Յանձնաժողովոյ քննութեան ենթարկուի. առանց այս օրինական քննութեան կարելի չէ երգել տալ Ս. Եկեղեցեաց մէջ:

Յօդ. ԺԵ. — Երաժիշտ. Յանձնաժողովը պարտաւորիչ կը նկատէ կրօնական

երգերու հետ նաև ազգային երգերու ուսուցումը՝ յայտն դասընթացներու համար, և իր գլխավոր ջոնքերէն մէկը պիտի ըլլայ կրօնական և ազգային երգեր գաշնաւորելով ձայնագրեալ հետգհետէ հրատարակութեան տակ:

Յօդ. ԺԶ. — Երաժիշտ Դասատուն մասնաւոր ամսաթիշակ կը ստանայ վարժարանաց Հոգաբարձութիւններէն, երբ կը ստանան վարժարանին Ազգ. երգերու և ձայնագրութեան ուսուցչութիւնը. նաև ամսաթիշակ կը ստանայ Տնօրէն Խորհրդոյ կողմէ՝ Դպրաց Դասու համար յատկացուած դասաւանդութեան առթիւ: Երաժիշտական Յանձնաժողովը կը պաշտպանէ անոնց իրաւունքները, և կը խորհի անոնց վիճակը բարելաւելու և բարձրացնելու:

Յօդ. ԺԷ. — Երաժիշտ. Յանձնաժողովը յարմար կը գտնէ դասաւանդութիւնները կատարելէ հայ կամ եւր. ձայնանիշերով, և երկու ձեւն ալ ընդունելի կը նկատէ, և մէկը կամ միւսը պարտաւորիչ:

Յօդ. ԺԸ. — Երաժիշտ-ուսուցչի «Արտօնագիր» միայն կը յանձնուի գաւառութեան աշխատանքաց, որոնք վարժ են եկեղեց. երգեցողութեանց և տեղեակ ժամատացութեան:

Յօդ. ԺԹ. — Երաժիշտ. Յանձնաժողովը գաւառական երաժիշտ-ուսուցչաց վկայական կուտայ, հիմնուելով Գաւառի Առաջնորդաց և Կրօն. Ժողովոց քննութեանց տեղեկագիրներու և պահանջած վկայականաց:

Յօդ. Ի. — Այս ծրագիրը կրնայ իր յաւելումաձր ունենալ, որ գործադրութեան կը դրուի Կրօն. Ժողովէն վաւերացուելէ յետոյ:

Յօդ. ԻԱ. — Երաժիշտ. Յանձնաժողովը իւր յատուկ կնիքը ունի:

ԿԱՐԵՒՈՐ

Մեր պատուարժան գործակալներէն կը խնդրենք տարեգլուխէն առաջ մաքրել իրենց հաշիւը, ի վիճակի դնելու համար զմեզ գործադրելու այն օգտակար առաջադրութիւնները, զորս կը պարգենք քիչ մը անդին: Նոյնը կը խնդրենք ուղղակի բաժանորդագրուող այն անձերէն, որոնք տակաւին իրենց բաժնեգիրն չեն զրկած:

ԼՆՁՈՒԱԿԱՆ ՀԱՐՑ ՄԸ

ՏՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Պարոյ արդի սառադարձութիւններն ուղիղ ըլլալէ հետի են:

Ինչպէս որ Italie = Իտալիա
Britania = Բրիտանիա
Espagne = Սպանիա

Կը գրենք, պէտք է որ անուններն ալ լեզուական այս օրէնքին ենթարկուին,

և Diderot = Դիդրո
Napoleon = Նապոլէոն
Bonapart = Բոնապարտ
Voltaire = Վօլտէր գրուին,
ինչպէս որ Socrate = Սոկրատ
Aristote = Արիստոտէ կը գր-

ուինք:

Օտար ամեն տառ ի մեզ իր համալսանին, համաձայն ունի. զոր օրինակ՝

B=Բ, C=Շ, D=Դ, G=Կ, K=Ք,
P=Պ, T=Տ, TH=Թ, Y=Ե:

Ի դէպ, յիշատակել որ արեւելեան Հայոց սառադարձութիւններն աւելի ուղիղ և բնական են:

Առ այս կը խնդրեմ որ իմ սառադարձութիւններն անփոփոխ մնան:

«Ամեն», միշտ «Ե»ով իբր կը ճառակալ «ամենայն»ի, ոչ «ամէն» «է»ով, որ կը նշանակէ «Ամեն=ainsi soit-il».

ԽԱԶԻՍԱՐ

Խմբագրութիւն «Տաճար»ի

Մեր պատուական աշխատակիցը՝ Խաչատար՝ լեզուական շատ կարեւոր հարց մը կը յուզէ: Իր դատողութիւնները, զորս մտերմական կերպով գրած էր, մասնաւոր դիտումով մը կը հրատարակենք: Ըսենք նախ և առաջ որ եղած դիտողութիւնները ճիշդ են սկզբամբ, բայց հայ տառերու հնչման այն կերպով զոր ունին ամբողջ Թրքահայք. (ի բաց առեալ մէկ երկու արեւելեան գաւառներ), գործադրելի չենք դնուեր, ոչ ալ անհրաժեշտ: Տառադարձութիւն ըստ ինքեան անհամկնալի է մեզ:

Եթէ *Espagne, Britania* = Սպանիա, Բրիտանիա գրուելը են ի մեզ ժամանակաւ, պատճառն այն է որ հին ասուն «պ» գիրը կը հնչուէր *Ֆրանս* . «բ» ի պէս, և «ք»՝ «հ» ի պէս : Նմանապէս՝ ուրիշ գիրերն ալ : Մեր ուսանայ եղբարք կը հետեւին տառադարձութիւն կոչուած կանոնին, ոչ թէ այդ կանոնը ուսումնասիրած ըլլանուն համար, այլ որովհետեւ իրենց մէջ գիրերու հնչումը չէ փոփոխուած : Անոնք եւրոպական յատուկ անուններն և պարզ բառերը հայերէն տառերով գրելու ատեն, ճիշտ այն գիրերը կը զործածեն որ եւրոպական տառերու համաձայն կը հնչուին . այսպէս *Բերլին* կը գրեն և կը հնչեն *Berlin*, մինչ մենք այդ հնչումն ունենալու համար պէտք է գրենք Պերլին : Նոյնպէս *Pekin, Maroc, Paris*, իրենց բուն հնչումով գրելու համար, Թրքահայը պարտաւոր է գրել *Բեփին, Մարոֆ, Բարիզ* . մեր աչքերուն և ականջներուն շատ խորթ պիտի դային Պեկին, Մարոկկո, Պարիս, ինչպէս կը գրեն Ռուսահայք :

Հետեւապէս մեր համոզումն այն է որ հին դասական անուններուն տառադարձիկ ուղղագրութիւնը՝ Պլատոն, Սոկրատես, Դիոգենէս են . պահելով հանդերձ, իբրեւ հինէն ի վեր քաջածանօթ անուններ (որոնք իրենց լեզուին մէջ հնչուածէն բոլորովին տարբեր կը հնչուին ի մեզ), օտար նոր անուններ՝ քաղաքի, անձի ևն . հայերէնի վերածելու ատեն պէտք չկայ երեւակայական օրէնքի մը հպատակելու աշխատիլ, ճղաւաղելով հնչումը : Այսպէս *Victor Hugo*, Թրքահայոց մէջ գրուած է *Վիկտոր Հիւգո*, և ոչ *Վիկտոր Հիւգո*, *Voltaire* = *Վոլտէր* և ոչ *Վոլտէր* : *Paul Bourget* = *Բօլ Պարժե* և *Պօլ Բուրժե* (*), *Diderot* = *Տիսո* և ոչ *Դիդրո* :

Համամիտ ենք թէ Թրքահայ լեզուին մէջ տառերը կորանցուցած են նախկին հնչումը . բայց քանի որ մենք «ք» կը հնչենք *Ֆրանս* . «բ» ի պէս, $q=c$, $\eta=\epsilon$,

(*) Եթէ տառադարձութեան հետեւիլ հարկ ըլլար, պէտք էր գրել այս անունը Պաւլոս Բուրժեթ!!!

$s=d$, $\eta=b$, գրողները իրաւունք ունին ժողովուրդին հնչումին հետեւելու . այնպէս ընելու պարտաւոր ալ են, որովհետեւ լեզուին տէրը ժողովուրդն է : Եթէ հնչումը շտկել կարելի ըլլայ, այն ատեն ուղղագրութիւնն ինքնին կը շտկուի :

«Ամեն» ի մասին գրածին կատարելապէս համամիտ ենք : Լաւագոյն է գրել «Ե»ով, իբրեւ համառօտութիւնը «ամենայնի», թէև մեր գրողներէն շատ քիչեր ուղղորթիւն կ'ընծայեն այդպիսի նրբութիւններու :

Ամէն պարագայի մէջ, ջերմապէս շնորհաւորելի է մեր պատուական աշխատակիցը՝ հայ լեզուի կանոնաւորման մասին ցոյց տուած հոգածութեանը համար, մինչ, աւսի՛ղ, այստեղ ատանկ հինցած նիւթերու վրայ մտածող անգամ չկայ, լեզուական այն Արշակաւանին մէջ ուր կը գտնուինք :

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Ս. ՊԱՏՐԻԱՐԻՆ անցեալ և այս շարժումը շնորհաւորական այցելութիւններ տուին բազմաթիւ հայ և օտարազգի անձնաւորութիւններ : Ի մէջ այլոց այցելեցին Ֆրանսական, Ռուսական, Պարսկական Հեղինական և այլ դեպքանատանց Ա. Թարգմանները, Յունաց պատր. փոխանորդն և Ա. գործակատարը, Պուլկարաց Եկզարքին կողմէ փոխանորդը, Մանասզրի Մեղրուպոլիան և Ա. գործակատարը, կաթոլիկ Ասորիներու փոխանորդը և գործակատարը, Հայ-բողոքականաց Աղգոսպետ Յակոբ էֆ. Պոյաճեան՝ Դուռնուրաճեան և Շմաւոնեան էֆ. ներու հետ, Մր. Բիթ, Մր. Պօէն, Գաբրիէլ էֆ. Նորատուհեան, Տօքթ. Տաղաւարեան, Կորսպետ էֆ. Էգնատեան, Հրէից Խախումապետի փոխանորդը, Տեյի Մեյի Անգլ. Թերթին Թըղթակիցը, «Իթիհատը Անաորը» ի նախագահ Խիւլուսի պէյ, Պոլսոյ կուսակալ Էմին պէյ :

* * Ն. Սրբազնութիւնը միւս կողմէ շարունակեց իր այցելութիւնները նախարարներուն : Այս առթիւ ներկայացուց Ազգին

բաղձանքներն ու սյահանջները՝ ի մասին հայաքնակ նահանգներու ապահովութեան, Առանայի համար խնդրուած 10000 ոսկին այս տարի ևս պիտոժէին մէջ անցուելուն, ազգապատկան կալուածներու ապահով սեփականատիրութեան և այլ խնդրոց, որոնց նկատմամբ յուսադրիչ խոստումներ ստացաւ:—Բշ. օր, ընկերակցութեամբ Տ. Գրիգորիս Արքեպ. ի, Տ. Սմբատ Վ. ի և Քաղաք. Ժողովոյ երկու ատենապետներուն, այցելեց Հոգեւոր Պետերուն: Յունաց Պատրիարքարանին մէջ, ուր շատ սիրալիր ընդունելութիւն մը եղաւ, երկու Պատրիարքներուն միջև չեղտուեցաւ Քոյր Եկեղեցիներուն յարաբերութիւններն անխախտ և ամուր պահելու պէտքը: Տ. Եօաքիմ Պատրիարք հետաքրքրուելով գաւառի պէտքերուն, Գէորգ Էֆ. Ասլանեան բացատրեց թէ Սահտ փաշայի Դահլիճը հաւասարներ տուած է, բայց չօչափելի արդիւնք չկայ:—Նոյն օրը Ս. Պատրիարքն իր հետեւորդներով այցելեց Պուկարաց Եկեղեցին ուր նոյնքան սիրալիր խօսքեր փոխանակուեցան, միեւնոյն խնդրոց վրայ:—Հրէից խախտմամբ տրուած այցելութեան միջոցին նստում էֆ. յայտնեց Հայ ազգին ներկային և անցեալին վրայ ունեցած տեղեկութիւնները, աւելցնելով թէ ինք հետաքրքրուած է օտար հայազէտներու գործերով ալ: Խօսակցութիւնը պահ մը տեղի ունեցաւ գերմաներէն լեզուով՝ երկու Հոգեւոր Պետերուն միջև, որմէ յետոյ Ս. Պատրիարքը մեկնեցաւ համակրական արտայայտութեանց մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԿ ԳԱԻԱՌՆԵՐՈՒ մէջ ստտկան-զինուորներու նոր վաշտ մը հաստատելու նպատակով 20,000 ոսկիի վարկ մը խնդրող օրինագիծ մը կը պատրաստէ եւ մտական նախարարութիւնը, կ'ըսէ Սղաւսյոյ:

* * Կարգ մը գաւառներէ սպանութեանց են, լուրեր կը հասնին չարթուս ևս, բայց միւս կողմէ գոնութեամբ կ'արձանագրենք թէ Բաղէշի կուսակալի փոխանորդը կը շարունակէ աւազակներու հետապնդութիւնը: Աւազակներէ ոմանք ձերբակալուեր, և Տիարպէքիի և Սղերդի ճամբուն վրայ

գողցուած ապրանքներէ մաս մը ետ արբուեր է:

ՆՈՐԸՆՏԻՐ կաթողիկոս Վեհ. Տ. Տ. Գէորգ Ե. ի ընտրութիւնը նպաստաւոր ընդունելութիւն գտած է ռուսական չրջանակներու և թերթերու մէջ, կ'ըսէ Թիֆլիզէն հեռագիր մը: Ս. Պատրիարքը հեռագրով շնորհաւորած է այս ընտրութիւնը, հետեւելով նախկին սովորութեան, որ առաւելագոյն քուէ ստացողը կը ճանչնայ Կաթողիկոս:

ՔՂԻԷՆ Տ. Պապ Ծ. Վ. Խորէնեան Պատրիարքարան ուղղուած հեռագրով մը կրկին հրաժարած է առաջնորդական պաշտօնէն, և միւս կողմէ Խարբերդի Դաւառ Վարչութիւնը հաղորդելով թէ Տ. Պապ Ծ. Վ. իրենց թեմին առաջնորդ ընտրուած է, կը խնդրէ փութով հաստատել այդ ընտրութիւնը: Ազգ. Վարչութիւնը ասկէ առաջ մերժած էր այս վտերացումը, այն առարկութեամբ թէ «տեղւոյ մը առաջնորդը չի կրնար ուրիշ տեղէ մը ընտրուիլ»: Այս առարկութիւնը հիմ չունի սակայն Ազգ. Սահմանադրութեան մէջ, և նախընթաց օրինակներ բացայայտօրէն կը չեղոքացնեն զայն, ինչպէս մէկ քանի տարի առաջ՝ Տ. Սմբատ Եպ. ի համար, որ Շ. Դարահիսարէն փոխադրուեցաւ Կարին: Իրաւ է որ Քղեցիք չեն ուզեր բաժնուիլ իրենց Առաջնորդէն, որուն հնգամեայ պաշտօնավարութենէն գո՛մնացած են, և հեռագրով ալ խնդրած են Պատրիարքարանէն որ Տ. Պապ Ծ. Վ. չհեռացուի Քղիէն, բայց քանի որ Ն. Գերապատուութիւնը Խարբերդը կը նախընտրէ, ըստ մեզ բանաւոր չէ հարկադրել զինքը՝ Քղի մնալու: Հինգ տարուան գնահատելի պաշտօնավարութենէ մը ետքը Տ. Պապ Ծ. Վ. իրաւունք ունի աւելի կարեւոր թեմի առաջնորդն ըլլալու. եկեղեցականք ևս բնական է որ յառաջիմութեան փափաքին, օրինաւոր ու պատուարեր եղանակով, ինչպէս ներկայ պարագային մէջ: Հետեւապէս վստահ ենք թէ Խառն ժողովը, համաձայն նախկին Վարչութեան մը որոշման թէ «առաջնորդները կրնան տեղափոխուիլ, երբ նոր ընտրութիւնը ենթա-

կային համար յառաջդիմական ըլլայ» , պիտի փութայ գոհացում տալ Խարբերողցիներուն , որոնք ստիպողաբար կը պահանջեն իրենց առաջնորդը :

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԼԷ ԴՆ . օր չկրցաւ մեծամասնութիւն կազմել , օգին խոտութեան հետեւանօք անդամոց մեծ մասին բացակայութեան պատճառաւ : Կրօն . Ժողով ևս չկրցաւ գումարուիլ :

ՊԱՆՏՐՄԱՆՈՎԱԼԷՍԻԻԻ առաջնորդ Տ . Կարապետ Եպիսկ . Մաղլումեան օր Պոլսու եկած է ԴՆ . օր Ս . Պատրիարք Հօր ներկայանալով բացատրութիւններ առաւ Պանդոսի քարահանքի խնդրոյն վրայ : Խառն Ժողովոյ ներկայ անդամները որոշեցին լսել նաեւ քարահանքի վարձակալ Օննիկ էֆ . Տէրօնեանը , վերջնական որոշումը տալու համար :

ԱՏԱՆԱՅԻ մէջ անապահովութիւն տիրելու մասին բացատրութիւններ կուտան շաբաթուա հասած նամակներ : Խրատմներու լուրը ծագում առած է նոյն քաղաքի Չարչափուգ թաղը կրեաւցի պահնորդի մը օգին մէջ քանի մը ձեռք դէնք պարպելէն , ինչ որ այն ատիճան տհաքեկած է թաղեցիները , որ այր , կին , սղայ 1000 հոգիի չափ ապաստաններ են անդ . և գերման հիւպատոսարանները և գերման գործարանները : Երկու հիւպատոսները պաշտօնական համալզեալով փութացեր են փողոց ելնել , դէպքի մը առաջքը առնելու համար . կրեաւցի պահնորդը թէեւ յաջողեր է փախչիլ , բայց ի վերջոյ ձերբակալուեր է : Այս խուճապին վրայ կարգ մը անձեր պատրաստուեր են Մերսին և անկէ Կիպրոս երթալ , բայց կուտակալ Մուամմէր պէյի ջանքերուն չնորհիւ կարելի եղած է միաքերն հանգարտեցնել : Կը սպասուի որ կուտակալ պէյը խնդրոյն չարժաւթն երեւան հանէ , և յանցաւորները խափել պատժուին :

* * Ատանայի դէպքին այրած Հայ-բուլղարականաց ժողովարանին վերաջինութիւնն աւարտած ըլլալով Դեկտ . 4ին բացման հանդէսը կատարուած է ի ներկայութեան առաջնորդ Տ . Շահէ Վ . ի և փոխա-նորդ Տ . Արսէն քհ . ի : Այս առթիւ սիրալիր համերաշխութեան խօսքեր փոխանակուած

են երկու հասարակութեանց պետերուն միջև : Ինչպէս յայտնի է , Հայ-բուլղարականք տարիուկէսի չափ հոգեւոր պաշտամունք կը կատարէին հայ եկեղեցւոյ մէջ :

ԿՈՎԿԱՍՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ երեսնամեակը կատարուեցաւ Տփղիսի մէջ անցեալ կիրակի օր մեծ հանդիսաւորութեամբ : Առաւօտուն հոգեհանգստեան պատարագ մատուցուեցաւ ընկերութեան հանգուցեալ քաջերաներուն համար : Կէս օրէն վերջ արտակարգ հանդիսաւոր ժողով գումարուեցաւ Թիֆլիզի անդամներուն ամբողջութեան և ընկերութեան քառասուն և վեց մասնաճիւղերու պատուիրակներուն ներկայութեանը : Դիչերը փայլուն երեկոյթ մը տրուեցաւ ճոխ յայտագրով : Կովկասի Հայութեան սրտին մօտիկ հուժկու կազմակերպութիւն մըն է այս , որ հաւաքաբար կը կատարէ Թրքահայոց Հիւանդանոցներուն , Աղքատանիւմներուն , Միացեալին և ուրիշ բարենպաստակ ընկերութեանց դերը : Բացած է 100է աւելի դպրոցներ , կը մատակարարէ որբանոց , կը պահէ աշակերտական ճաշարան , օրական 300 աշակերտի սնունդ հայթայթող , կը հրատարակէ գիրքեր , կ'օգնէ կարօտ գրագէտներու , հիւանդներու , աղքատներու , ունի ճոխ գրադարան մը ուրիշ ամիսը 3000 հոգի կ'օգտուին : Բազմաճիւղ , հսկայ հաստատութիւն մը , 1878ի Ռուս և Թուրք պատերազմէն ետքը հիմնուած , որ մեծ դեր ունեցած է Կովկասահայութեան զարգացման և ճշմարիտ բարեգործութեան մէջ : Արշակ Չօպանեան Անա-նիսի վերջին թիւին մէջ շատ արդարացի կերպով կը պահանջէ որ Եգիպտոսի Բաւրեղործականը , և Միացեալ Էնկ . ր մշտական յարաբերութեան մէջ մտնեն այս մարմնոյն հետ :

Արտօճատեր

ՀԱՅԵԱԿ ՔԶՆՅ . ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՅՈՒՆ-ԽԱՐԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԲԷՆՅ . ԿԷՋԻՐԻՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ . ԱՐՁՈՒՄԵԱՆ

“ՏԱՃԱՐ” Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ գաւառաց՝ տարեկան	40	դրու
Արսասանմանի համար	»	10 ֆրանք
Ռուսիա	»	4 բուլլի
Ամերիկա	»	2 օլար
Զեռէ կը ծախուի պրակը	40	փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ՕՍՄ. ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

شركة تجارية عثمانية

SOCIÉTÉ COMMERCIALE OTTOMANE

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 100,000 ՕՍՄ. ՈՍԿԻ

Կեդրոնացեղի՝ Կ. ՊՈԼԻՍ

Ա.Ռ.Ա.ԶԻՆ ՀԱՅ ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԴՐԱՄԱՏՆԵՐԸ ԱՌԺԱՄԵԱՅ ԿԵՐՊՈՎ ՀՍՍՏԱՏՈՒԱԾ ԵՆ

ՍԹԱՄՊՈՒԼ, ԿԱԹԸՐՃԸՐԴԼՈՒ ԽԱՆ

Հայկական սոյն գրամական հաստատութիւնը կ'ընէ փոխատուութիւններ՝ առեւտրական տոմսերու, մուրհակներու, փոխանակագիրներու, բաժնեթուղթերու, պարտաթուղթերու, ապրանքներու և բեռնազիրներու վրայ:

Կուտայ չէքեր, վարկազիրներ, փոխանակագիրներ և հեռագրական վճարումի հրամաններ՝ ինչպէս Թուրքիոյ, նոյնպէս աշխարհիս բոլոր մասերուն վրայ:

Կը դնէ և կը ծախէ ամեն տեսակ բաժնեթուղթեր և պարտաթուղթեր, թէ՛ մեր և թէ՛ քոյր օտար հրապարակներուն վրայ, ինչպէս և օտար դրամներ:

Կը գանձէ և կը զեղչէ առեւտրական տոմսեր, մուրհակներ, փոխանակագիրներ, բաժնեթուղթեր և կարօններ:

Կ'ընդունի գրամական աւանդներ նպատաւոր պայմաններով:

Դրամատունս հաստատած է Առեւտր. տեղեկութիւններու համար լաւագոյն կերպով կազմակերպուած սպասարկութիւն մը:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ

Խնայողութիւնը մեր հաւնայնիքն մեզ փաշտելէրու համար կ'ընդունի

ֆանդիքն (25) դրուշէն սկսելով գումարներ

Դրամատունս կը կատարէ նաեւ, թէ՛ իր հաշուոյն, թէ՛ մասնակցութեամբ և թէ՛ ուրիշներու հաշուոյն ամէն տեսակ արդիւնաբերութիւններու և ապրանքներու գնում, վաճառում, փոխանակութիւն, ներածում և արտածում:

Կ'ընդունի ներկայացուցչութիւն թէ՛ տեղական և թէ՛ օտար տուններու:

Կը կազմէ առեւտրական և ճարտարարուեստական ընկերութիւններ և կը մասնակցի անոնց: Կ'ընէ հանրօգուտ չինութեանց վերաբերեալ ամէն տեսակ ձեռնարկութիւններ:

ԳՐՐԾԱԳԱԼՈՒԹԻՒՆՔ
«ՏԱՃԱՐ ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
լոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բհնյ. Պողար-
եան
ԱՏԱԲԱԶԱՐ. — Տ. Սերորէ Բհնյ. Պուր-
մայեան
ԱՏԱՆԱ. — Տ. Կարապետ քհյ. Նրե-
ւանեան
ԱՅԻՐԵ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնեկեան
ԲԱՅԵՐԴ. — Մ. Սանտեան էֆ.
ԲԱՂԷՇ. — Առաջնորդ Տ. Սուրէն Ծ. Վ.
Գալէմեան
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Եղիշէ
Բհնյ. Արամեան
ԶՄԻԻՆԻՍ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԹՆ. — Առաջն. Փոխանորդ Տ. Ներսէս
Ա. Բհնյ. Վահանեան

ԿԻՐԱՍՈՆ. — Տ. Սրապիոն Բհնյ. Այլաեա
ՀԱԼԷՊ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մուրատեան
ՄՍՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄՍՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՒԴԻՍ. — Տ. Ռսկի Բհնյ. Պիպիեան
Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ. — Տ. Յարութիւն Բհնյ. Ստարադ-
եան
ՊՐՈՒՍԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Վար-
դան Ծ. Վ. Դաստարեան
ՊԱՆՏՐՄԱՊԱԼԷՔԷՍԻՐ. — Տ. Կռմարի Բհ.
Յիրգաթեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպիսկ. Կէօմբլուքճեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Դէպրդ Ծ.
Վրդ. Այլանեան
ՍԵՔՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաշեան
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմնեսիոս Բհնյ. Տրեղ-
եան
ՏԻՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏՐԱՊԶՈՆ. — Առաջնորդ Տ. Սերորէ Վ.
Սամուէրեան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պահ Բհնյ. Քիպարեան
ՔԴԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՅՐԷԶՆՕ. — Յակոբ էֆ. Նշիկեան

Գ Ի Ն 1 Ղ Ր Ո Ւ Շ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

Զամաթթար, Յակոբեան Խում

Կ. ՊՈԼԻՍ